ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆՔ ԱՄԱՆՈՐԻՆ

ՄԻՆՉԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԸ ՄՆԱՑԵԼ Է ՅՈԹ ՕՐ

ԵՍ ԿԱՐՄԻՐ ՈՒ ՀՐԵ ԱՔԼՈՐՆ ԵՄ



Նոր՝ 2017թվականը, ըստ Արեւելյան հորոսկոպի, Կարմիր ու Հրե Աքլորի տարի է, եւ նա խոստանում է լինել վառ, պայթունակ ու հուզական: Կարեւոր ու բեկումնային փոփոխությունների տարի՝ մարդկանց, առանձին պետությունների եւ, ընդհանրապես, ողջ աշխարհի ճակատագրում: Վրաստանի համար գալիք տարին խոստանում է լինել շրջադարձային՝ նրանով կսկսվի երկիրը աստիճանաբար դեպի նոր բարգավաճում տանող ուղին:

Ընտանիքի եւ ընտանեկան հարկի բարեկեցության հարցը կլինի Աքլորի տարվա գլխավոր եւ առաջնահերթ անելիքն ու խնդիրը: Կարեւոր է հիշել, որ հիմա մենք դնում ենք հիմքը մի նոր եւ բավականին երկար հատվածի, որի բարեկեցիկ լինելը կախված է նրանից, թե ինչպես կմտնենք այդ շեմը: Ահա ինչու է այժմ անհրաժեշտ՝ ազատվել ամեն կարգի վնասակարից ու ցանկացած նեգատիվից: Ձանալ՝ առավելագույն համապատասխանության ու ներդաշնակության հասնել հարազատների ու մերձավորների հետ հարաբերություններում:

Ընդհանուր առմամբ, մենք կարող ենք ապավինել ակտիվ եւ բավականին հաջող տարվա, առաջընթացներով լի փոփոխությունների, որոնք կվերաբերվեն ոչ միայն քաղաքական ու հասարակական, այլեւ մեր անձնական կյանքին: Կարեւոր է՝ չծուլանալ եւ չենթարկվել անմիտ վատնումների (դա ձեզ վրա թանկ կնստի):

Գալիք տարին գերադասելի է դիմավորել տանը: Մի' ձգտեք հեռանալ տանից, հավատացեք՝ բոլոր հնարավոր հաճելի անակնկալները եւ անգին գանձերը այս տարի ձեզ սպասում են հարազատ օրանում եւ հարազատ հարկի տակ: 2017-ը ողջունում, օրհնում եւ հովանավորում է ամեն կարգի տնային, սեփական ձեռքով ու քրտինքով ստեղծված բարիք:

Հենց այդպիսին էլ պետք է լինի ձեր տոնական սեղանը, բնակարանի զարդարանքը եւ Ամանորյա տոնածառը: Որքան շատ սեփական արտադրանք, այնքան ավելի լավ ձեզ համար: Ուտեստները պետք է լինեն պարզ, բայց՝ սննդարար, հագեցնող ու համեղ: Իսկ ամենանվիրական ու ըղձալի նպատակների իրականացման համար, Աքլորը խորհուրդ է տալիս՝ դեկտեմբերի վերջին, սեփական ձեռքերով բույն հյուսել եւ նրա մեջ դնել ձեր երազանքներին ու ցանկություններին համապատասխան խորհրդանիշներ՝ տնակ, նորածին տիկնիկ, հարսանեկան իրեր, մեքենա, դրամ, առողջություն եւ աշխատանքային հաջողություն խորհրդանշող իրեր: Այս կոմպոզիցիան թող գրավի սենյակի ամենապատվավոր անկյունը: Եվ, որ ամենակարեւորն է, հավատացեք հրաշքի: Չէ՞ որ Նոր տարվա սպասումներում մենք բոլորս էլ կարծես մանկանում ենք եւ շատ ենք ուզում, որ կատարվեն մեր ցանկությունները:

Բարի իրականացում դրանց:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԲՈԼՈՐԻՆ՝ ԱՄԱՆՈՐԻ ՇԵՄԻՆ

Նոր տարին ուր որ է կբախի մեր դռները: Ի՞նչ անել, ինչպե՞ս բաշխել այդ օրերի անելիքը, որպեսզի ամեն ինչ չկուտակվի վերջին օրը: Գուցե հետեւեք մե'ր խորհուրդներին:

25 դեկտեմբերի. Մինչ պատրաստելիք ճաշերի ցուցակը եւ ամանորյա անելիքների ծրագրեր կազմելը, փորձեք մաքրել ձեր հոգին: Ցանկալի է գնալ եկեղեցի, մոմ վառել՝ հանուն հանգուցյալ նախնիների հոգիների խաղաղության, ներում հայցել՝ կամա-ակամա նրանց հասցրած վիրավորանքների համար եւ օգնություն խնդրել նրանցից ապրող ժառանգների համար:

26 դեկտեմբերի. Փորձեք ազատվել դրամական պարտքերից, որպեսզի Նոր տարում պարտքի դիմելու անհրաժեշտություն չծագի:

Զբաղվեք ձեր արտաքին տեսքով՝ մտեք վարսավիրանոց, ընտրեք ամանորյա հագուստ եւ այլն: Գնեք այն մթերքները, որոնք երկար են պահվում, օրինակ՝ խնձոր, բանան, մանդարին, նարինջ, ընդեղեն եւ այլն:

27 դեկտեմբերի. Պատրաստեք հուշանվերներ մտերիմների համար: Այդ անելիս՝ մի' մոռացեք կարիքավորներին, հնարավորինս շռայլ եղեք ողորմություն բաշխելիս:

28 դեկտեմբերի. Բնակարանից դեն նետեք հին, չօգտագործվող իրերը, իսկ գլխից՝ չար մտքերը:

29 դեկտեմբերի. Սիրով եւ խաղաղ տրամադրությամբ զարդարեք տոնածառը: Ապա՝ մոտեցեք սրբապատկերին կամ մտովի դիմեք Բարձրյալին ու ներում հայցեք տարվա բացասական արարքների համար:

30 դեկտեմբերի. Պատրաստեք ծրագրած աղցաններն ու ճաշատեսակները:

31 դեկտեմբերի. Երազանք պահեք եւ պատրաստվեք հարազատների հետ դիմավորել Նոր տարին:

Երջանիկ Ամանոր ձեզ:

Նյութերը պատրաստեց
ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 28-ՐԴ ՏԱՐԻՆ

ՖԻԼՄԸ ՑՈՒՑԱԴՐԵՑ ՎՐԱՑԻՆԵՐԻ ԲԱՐՅԱՑԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Ցանկանում եմ ընթերցողների հետ կիսել այն տպավորությունները, որ ստացա ռուս-հայկական համատեղ «Երկրաշարժ» ֆիլմը (ռեժիսոր՝ Սարիկ Անդրեասյան, դերակատարներ՝ Կոնստանտին Լավրոնենկո, Մարիա Միրոնովա, Վիկտոր Ստեփանյան, Տաթեւ Հովակիմյան եւ ուրիշներ) դիտելուց:

Հավանաբար ընկալեցիք, որ ֆիլմը վերաբերում է ոչ հեռավոր անցյալի՝ 1988 թվականի դեկտեմբերի 7-ին Սպիտակի երկրաշարժին, որը ցնցեց ողջ աշխարհը՝ իր ողբերգական հետեւանքներով եւ, միաժամանակ, բացահայտեց մարդկային հարաբերությունների, մարդկանց միմյանց նկատմամբ հոգատար վերաբերմունքի փաստերը:

Ճիշտ է, 1988 թվականի դեկտեմբերի երկրաշարժի էպիկենտրոնը Սպիտակն էր, սակայն ֆիլմի ռեժիսորը ներկայացրել էր ոչ պակաս տուժած Լենինական քաղաքի (ինչպես այն ժամանակ կոչվում էր ներկայիս Գյումրին) կյանքի եռօրյա ժամանակագրությունը՝ մինչեւ երկրաշարժը եւ երկրաշարժից հետո:

Բնական աղետի ֆոնի վրա ֆիլմի դիտորդները դառնում են կինոնկարի երկու գլխավոր հերոսների՝ 45-ամյա ճարտարապետ Կոնստանտին Բերեժնոյի եւ 20-ամյա Ռոբերտ Մելքումյանի պատմության վկաները: Ճակատագիրը նրանց երկու անգամ հանդիպեցնում է. առաջին անգամ երկրաշարժից մի քանի տարի առաջ՝ 1979 թվականին, երբ Լենինականի մոտ գտնվող թունելում տեղի ունեցած ավտովթարի արդյունքում զոհվում են Ռոբերտի մայրն ու հայրը, իսկ ինքը՝ 12-ամյա պատանին, ով նույնպես գտնվում էր մեքենայում, ողջ էր մնացել: Ճարտարապետ Կոնստանտին Բերեժնոյը, որի ավտոմեքենան ընդհարվել էր Մելքումյանների մեքենային, մեղավոր էր ճանաչվել եւ դատապարտվել 8 տարվա ազատազրկման: 1988 թվականի դեկտեմբերի 7-ին նա Ռուսաստանից ինքնաթիռով գալիս էր Լենինական, որտեղ նրան սպասում էին կինն ու զավակները:

Այդ օրը քաղաքի բնակիչները սովորականի նման զբաղված էին իրենց առօրյա հոգսերով... Սովորականի նման եռուզեռ էր շուկայում, աշխատում էին հիվանդանոցները, կենցաղսպասարկման օբյեկտները... Էկրանին տեսնում ենք բացարձակապես տարբեր մասնագիտության մարդկանց ճակատագրեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր անձնական ուրախությունը, ցավը, հիմնախնդիրներն ու երջանկությունը: Ոչ մեկը չէր սպասում, որ, ընդամենը մի քանի ժամ անց, իրենց վիճակը բնական աղետի արդյունքում կտրականապես կփոխվեր: Ֆիլմը դիտելիս՝ ակամա մտածում ես, թե որքան առօրեական է մարդկանց վարքը մինչեւ երկրաշարժը, առավել եւս, երբ գիտես, որ նրանց առաջիկայում վիթխարի դժբախտություն, կամքի ուժի ու զգացումների փորձառություն է սպասում...

Երբ ամեն ինչ հետին պլան է մղվում, համընդհանուր վիթխարի դժբախտության արդյունքում, երբ սկսում ես ամաչել անձնական նեղ շահերիդ համար: Այդպիսին էր Կոնստանտինի եւ Ռոբերտի հանդիպման պահը՝ Ռոբերտը նրան ատում էր ծնողների մահվան պատճառով, սակայն տարերային աղետի ժամանակ նրա վարքը փոխվեց, վրեժխնդրության զգացումն իր տեղը զիջեց տուժածին օգնելու եւ ցավակցություն հայտնելու զգացումին:

Ֆիլմում նկարագրված երկրաշարժը տեղի ունեցավ անսպասելի, առանց նախնական թեթեւ ցնցումների, երբ տեղի ունեցածը առաջին վայրկյաններին ոչ էլ ընկալեցին. դա ահավոր ստորգետնյա ցնցում էր, որից շենքերը անսպասելիորեն փլվեցին: Այդ առումով ֆիլմը իրատեսական է, դրանում քաղաքականություն չկա, շեշտը դրվում է մարդկանց վարքի, բարոյական ու զգայական կողմերի, փոխօգնության, ցավակցության, սիրո, կարեկցանքի վրա, երբ մարդկային մեծաքանակ զոհերի ֆոնի վրա ծնվում է նաեւ նոր կյանքը: Իհարկե, կային նաեւ մարդասիրական չար անձնավորություններ, ովքեր Լենինականում տեղի ունեցած որբերգությունից օգտվում էին՝ կողոպտելով երկրաշարժից տուժած շենքերի բնակարաններն ու ոսկերչական խանութները, զբաղվելով դիակապտությամբ:

Բնականաբար, ֆիլմում օգտագործվել էին նաեւ հատուկ էֆեկտներ՝ այլ կերպ դժվար էր ներկայացնել երկրաշարժի ծանր հետեւանքները: Ֆիլմը դիտողների վրա ծանր տպավորություն է թողնում այն դրվագը, երբ Լենինականի օդանավակայանում վայրէջքի ժամանակ Կոնստանտին Բերեժնոյը ինքնաթիռի լուսամուտից տեսնում է, թե ինչպես են քանդվում շենքերը, եւ ինչպես է քանդվող շենքերի փոշին ծածկում քաղաքը... Նույնպիսի դժվարությամբ կարելի էր հետեւել հիվանդանոցի ավերման դրվագին... Հավանաբար, դիտողները չեն կարողանում զսպել արցունքները՝ դառնալով ավերակների տակ մնացած, սակայն դեռեւս ողջ մարդկանց խոսակցության վկան... Ճիշտ է, առանձին կադրեր, ըստ իս, գուցեեւ չափազանցված են, եւ դժվար է ընկալել որպես իրականություն (ասենք, երկրաշարժի պահին Լենինականի օդանավակայանում երկրաշարժի վայրէջքի փաստը), սակայն, ընդհանուր առմամբ, հատուկ էֆեկտների առումով՝ ֆիլմը հաջողված էր:

Եվ կասեմ, որ ֆիլմը դիտելիս շատ է հետաքրքրում, թե որքանով կներկայացվեր (կամ ընդհանրապես կներկայացվե՞ր արդյոք), վրացիների եւ, ընդհանրապես, Վրաստանի դիրքորոշումը երկրաշարժի ժամանակ: Չէ՞ որ մենք շատ լավ ենք հիշում տարերային աղետը՝ Սպիտակի երկրաշարժը Թբիլիսիում էլ զգացվեց: Փաստ է, որ բնակիչները բավականին վախեցան, սակայն երբ իմացանք, թե ինչ է տեղի ունեցել Հայաստանում, վախը փոխվեց աջակցության՝ վրացիները անմիջապես մեկնեցին եղբայր հայերին օգնելու: Այո', ֆիլմը արդարացրեց սպասումները՝ մի քանի կադրերում բացահայտորեն երեւաց վրացիների բարյացակամ դերը հարեւանների նկատմամբ, երբ հափշտակված վրան-հոսպիտալներում բժիշկներին դեղորայքը չէր բավականացնում վիրավորներին օգնելու համար, հենց այդ ժամանակ տեղ հասան վրացիների կողմից բերված բժշկական սարքավորումները...

Կինոկադրերից մեկը անօթեւան մնացածների մարդասիրական օգնության հերթերն էր: Առաջին օգնության առարկաներով լցված տուփերին կարդում ենք մեծ տառերով արված գրառումները. «Трагедия Армении-наша общая боль и горе. Братья, мужайтесь! Грузия с Вами», ֆիլմի կադրերում արված գրառումներում եւս ընդգծված է. «Первым на помощь Армянской ССР пришли врачи, спасатели и простые люди из Грузии»:

Ֆիլմը կրկին անգամ հիշեցրեց այն հավերժական սկզբունքները, որտեղ ներկայացված են մարդու գոյության հիմնական պատճառները՝ փոխադարձ օգնություն, աջակցություն, հոգատարություն եւ հավատարմություն բարոյական արժեքներին...

Խորհուրդ եմ տալիս դիտել ֆիլմը, եւ ինքներդ դրանում կհամոզվեք:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՋԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԽԱԼՆԵՐ

Ասում են, որ երեխայի նկատմամբ հոգատարության չափից ավելի դրսեւորումը հակառակ արդյունքի է հանգեցնում: Որքանո՞վ է դա համապատասխանում իրականությանը:

Հ.Սարգսյան

Թբիլիսի

Ծնողների կողմից զավակների հանդեպ չափից ավելի հոգատարությունն ու սերը հաճախ խոչընդոտում են վերջիններիս մեջ ինքնուրույնության, պատասխանատվության զարգացմանը: Ծնողները դաստիարակության հարցում հիմնականում հետեւյալ սխալներն են թույլ տալիս:

Ամեն կերպ երեխային վտանգից պաշտպանելը. Եթե երեխան բակում չի խաղում կամ գոնե մեկ անգամ չի վնասվում, ապա, հետագայում, հայտնվելով վտանգներով լի կյանքի թատերաբեմում, նա վախ ու բարդույթներ է ունենում:

Շատ արագ օգնության հասնելը. Անմիջապես օգնության հասնելով՝ մենք չենք թողնում, որ երեխան ինքնուրույն լուծի խնդիրները եւ գտնի դժվար իրավիճակից դուրս գալու ելքը: Այդպիսով, հասուն տարիքում նա ի զորու չի լինի լուծել իր կյանքում ծագող հարցերը:

Երեխային խրախուսելու համար պարգեւատրելը. Եթե ընտանիքում հարաբերությունները կառուցվում են միայն նյութական խրախուսման հիման վրա, երեխան զրկվում է ներքին մոտիվացիայից ու սիրո զգացումից:

Անցյալում թույլ տված մեր սխալների մասին չկիսվելը. Գալիս է մի պահ, երբ պատանին ցանկանում է «թեւերը բացել» ու ճախրել, սեփական փորձ ձեռք բերել: Մենք պետք է թույլ տանք նրան դա անել, սակայն չի նշանակում, որ չպետք է կիսվենք նրանց հետ այն սխալների մասին, որոնք ինքներս ենք թույլ տվել նրանց տարիքում: Պետք է պատմել կյանքից քաղած դասերի մասին:

Ինտելեկտը հասունության հետ շփոթելը. Եթե երեխան խելացի է, դա ամենեւին էլ չի նշանակում, որ նա հասունացել է կյանք մտնելու համար: Մի ոլորտում խելացի լինելը հասունության նշան չէ: Հետեւեք նույն տարիքի մյուս երեխաներին: Եթե նրանք առավել ազատ են կարողանում կողմնորոշվել իրենց ընտրության հարցերում, նշանակում է՝ ձեր երեխայի անկախությունը սահմանափակված է:

Մենք հաճախ չենք անում այն, ինչ սովորեցնում ենք երեխաներին. Երեխան սովորում է ոչ թե ձեր խոսքերի, այլ ձեր արարքների հիման վրա:

ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊ

ՍՈՎՈՐԵՔ ԸՆԴՈՒՆԵԼ...

Հաճախ դիտողություն են անում, որ շնորհակալության զգացում չունեմ, չեմ կարողանում գնահատել մարդկանց բարի վերաբերմունքը, սակայն դա ինչ համար մնում է անորոշ: Ինչպե՞ս վարվել:

Ռ.Մարտիրոսյան

Բոլնիսի

Ձեր կյանքում առատություն կլինի, եթե սովորեք սիրով ընդունել այն, ինչ տրվում է ձեզ: Ընդհանրապես, մենք ստանում ենք այնքան, որքան տալիս ենք, հետեւաբար, պետք է տալ այնքան, որքան ստանում ենք: Ի դեպ, այնքան էլ հեշտ չէ սովորել ընդունելու այն, ինչ տրվում է ձեզ: Փորձեք վերլուծել ձեր արձագանքը ձեր հանդեպ արվող հաճոյախոսություններին: Փորձեք ընդունել դրանք, քանի որ դրանց օգնությամբ ձեզ շրջապատողներն իրագործում են ինչ-որ բան տալու իրենց հնարավորությունը:

Ձեզ տրվող ամեն ինչն ընդունելու ունակությունը յուրատեսակ ձգողականությամբ լիություն կբերի ձեր կյանք: Մի' հրաժարվեք, երբ ձեզ որեւէ լավ բան են առաջարկում: Նվեր ստանալիս՝ հաճույքով ընդունեք ու շնորհակալություն հայտնեք: Պետք չէ մտածել, որ նվերները ձեզ խոցելի են դարձնում եւ պարտավորեցնում: Եթե այնպիսի նվեր եք ստացել, որը ձեր սրտով չէ, այն տվեք նրան, ում դա հաստատ կուրախացնի: Նվերը մերժելով՝ դուք խոչընդոտում եք ոչ միայն ձեր, այլեւ նվիրողի կյանքին լիություն բերող առվակի հոսքը եւ՝ արգելափակում այն:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ԻՆՉՊԵՍ ԽԵԼԱՄՏՈՐԵՆ ՏՆՕՐԻՆԵԼ ԳՈՒՄԱՐԸ

Երիտասարդները հարցնում են. «Ինչպե՞ս կարող եմ խելամտորեն տնօրինել իմ գումարը»

- Հաճախ ծրագրում եմ գնել մի բան, որի կարիքը իրականում չունեմ եւ հնարավորություն էլ չունեմ ուրիշը գնելու, բայց ցանկանում եմ գնել, քանի որ զեղչեր կան:

Երբեմն էլ ընկերներս հրավիրում են ինձ թանկարժեք գնումների կամ վայրեր: Ես ուզում եմ լինել ընկերներիս միջավայրում ու զվարճանալ նրանց հետ: Ոչ մեկս էլ չենք ուզում ասել՝ կներես, հնարավորություն չունեմ:

(Սկիզբը՝ 97-98 համարում)

- Հայրս սովորեցրել է ինձ, թե ինչպես տնօրինել բյուջեն, նաեւ ասել է, թե որքան կարեւոր է ընտանեկան բյուջեն տնօրինելու մեջ կազմակերպված լինել: Իսկ մայրս սովորեցրել է այլ գործնական դասեր: Նա սովորեցրել է ինձ համեմատել գները, նախքան ինչ-որ բան գնելը: Մայրս կարող էր հրաշքներ գործել փոքր գումարով: Հիմա ինքս կարող եմ հոգալ իմ ֆինանսների մասին: Ես խելամիտ ձեւով եմ օգտագործում իմ գումարը եւ ունեմ մտքի խաղաղություն ու ազատություն, որ գալիս է անտեղի պարտքեր չունենալու մտքից,- պատմում է երիտասարդներից մեկը:

Տես խոչընդոտները

Իհարկե, հեշտ է ասել՝ խնայիր գումարդ, սակայն գործնականում դժվար է տնօրինել այն, հատկապես, եթե դու ապրում ես ծնողներիդ հետ եւ գրպանի գումար կամ աշխատավարձ ես ստանում: Ինչո՞ւ: Քանի որ մուծումների մեծ մասը հավանաբար կատարում են ծնողներդ: Ուստի, քո գումարի մեծ մասը դու ծախսում ես այնպես, ինչպես ուզում ես: Դա կարող է զվարճալի լինել քեզ համար:

Բացի այդ, քո հասակակիցները գուցե մղեն քեզ չափից ավելի շատ գումար ծախսել:

Բնական է, որ դու ուզում ես ընդունված լինել ընկերներիդ կողմից: Սակայն հարցրու ինքդ քեզ. «Արդյոք ընկերներիս հետ շատ եմ ծախսում, քանի որ կարող եմ այդպես վարվե՞լ, թե՞ քանի որ պարտավորված եմ զգում ինձ»: Շատերը գումար են ծախսում՝ ընկերների եւ գործընկերների առաջ իրենց հեղինակությունը բարձրացնելու համար: Այդպիսի հակվածությունը կարող է լուրջ ֆինանսական խնդիրներ առաջացնել, հատկապես, եթե վարկաքարտ ունես:

Վարկաքարտդ ամբողջությամբ օգտագործելու կամ ամբողջ աշխատավարձը մի ակնթարթում ծախսելու փոխարեն, կարող ես գործել հետեւյալ կերպ.

Երբ գնում ես ընկերների հետ ժամանակ անցկացնելու, նախապես պլանավորիր, թե որքան ես ծախսելու: Եթե աշխատավարձը փոխանցվում է բանկ, ապա հաշվի համարից հանիր միայն այնքան գումար, որքան անհրաժեշտ է այդ օրվա համար: Խելամիտ է ընկերություն անել նրանց հետ, որոնք զգուշորեն են օգտագործում իրենց գումարը եւ քաջալերում են համեմատել տարբեր խանութների գները եւ ոչ թե գնել առաջին պատահած բանը:

Եթե ծնողներդ ասում են՝ ո՛չ

Նույնիսկ եթե գրպանի գումար կամ աշխատավարձ չես ստանում, կարող ես արժեքավոր դասեր քաղել, մինչեւ ապրում ես ծնողներիդ հետ: Օրինակ, երբ ծնողներիցդ գումար ես ուզում կամ խնդրում ես նրանց ինչ-որ բան գնել քեզ համար, նրանք գուցե ասեն՝ ո՛չ: Ինչո՞ւ: Պատճառներից մեկը կարող է լինել այն, որ քո ուզածի իրը ավելին արժե, քան թույլ են տալիս ընտանիքի հնարավորությունները: Մերժելով քո խնդրանքը (թեեւ նրանք գուցե նախընտրեին ասել՝ այո)՝ ծնողներդ ինքնատիրապետում դրսեւորելու լավ օրինակ են թողնում քեզ: Իսկ ինքնատիրապետումն անհրաժեշտ է գումարը լավ տնօրինելու համար:

Ենթադրենք՝ ծնողներդ կարող են կատարել քո խնդրանքները, սակայն ասում են՝ ո՛չ: Միգուցե մտածես, որ նրանք ժլատ են: Սակայն խորհիր. թերեւս նրանք ուզում են քեզ սովորեցնել, որ երջանկությունը կախված չէ ուզածդ բոլոր իրերն ունենալ: Այս առումով, Աստվածաշունչն ասում է. «Արծաթ սիրողը արծաթից չի կշտանալ, եւ ոչ էլ հարստութիւն սիրողը՝ եկամուտից» (Ժողովող 5:10):

Այս խոսքերի ճշմարտացիությունը երեւում է շատ երիտասարդների օրինակից, որոնց ծնողները գնում են նրանց համար այն ամենը, ինչ նրանք ցանկանում են: Կարճ ժամանակ անց նրանք բացահայտում են, որ երբեք բավարարվածություն չեն ունենում: Անկախ այն բանից, թե որքան ունեցվածք են կուտակում՝ նրանք միշտ զգում են, որ ինչ-որ բան դեռ պակասում է: Ժամանակի ընթացքում, այն երիտասարդները, որոնք ակնկալում են, որ իրենց բոլոր խնդրանքները կբավարարվեն, հնարավոր է դառնան անշնորհակալ:

Փողը ժամանակ է

Որոշ մշակույթներում ասում են՝ «Ժամանակը փող է»: Սա նշանակում է, որ մարդիկ ժամանակ պետք է ծախսեն փող վաստակելու համար, եւ ժամանակ կորցնելը նշանակում է փող կորցնել: Ճշմարիտ է նաեւ հակառակը՝ փողը ժամանակ է: Եթե դու փող ես վատնում, ուրեմն վատնում ես այն ժամանակը, որը պահանջվել է այդ փողը վաստակելու համար: Սովորի՛ր խելամտորեն օգտագործել գումարդ եւ, արդյունքում՝ կխնայես ժամանակդ: Ինչպե՞ս:

Ահա թե ինչ է ասում մեկ ուրիշ երիտասարդ.

- Երբ ես խելամտորեն եմ օգտագործում իմ գումարը, դրանով որոշում եմ նաեւ, թե որքան պետք է աշխատեմ: Պրակտիկ բյուջե ունենալու եւ դրան հավատարիմ մնալու շնորհիվ, ես ստիպված չեմ լինում երկար ժամեր աշխատել մեծ պարտքեր փակելու համար: Այդպիսով, ես եմ վերահսկում իմ ժամանակն ու կյանքը: Չէի՞ր ուզենա դու նույնպես վերահսկել քո կյանքը:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Վախկոտները չար են լինում, վախենում են պարտվել, ու երբ մի տեղ լավն են տեսնում, աշխատում են ժխտել:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ
(1936-2013)
Հայ բանաստեղծ

Վարդն ագռավի ինչի՞ն է պետք, կամ ինչո՞վ է սազում նրան...

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(1172-1216)
Վրաց բանաստեղծ

Բոլոր կենդանիներից միայն մարդն է, որ կարողանում է ծիծաղել, չնայած ծիծաղելու համար ամենաքիչ առիթները հենց մարդն ունի:

ԷՌՆԵՍՏ ՀԵՄԻՆԳՈՒԵՅ
(1899-1961)
Ամերիկացի գրող

Որոշ դեղեր բուն հիվանդությունից ավելի վտանգավոր են:

ՀԻՊՈԿՐԱՏ
(մ.թ.ա.460-մ.թ.ա.377)
Հույն բժիշկ, փիլիսոփա

Ազնիվ մարդուն կարող են հետապնդել, բայց պատվազրկել՝ երբեք:



ՖՐԱՆՍՈՒԱ ՎՈԼՏԵՐ
(1694-1778)
Ֆրանսիացի փիլիսոփա

Ընկերությունը չեն ծրագրում, սիրո մասին չեն բղավում, ճշմարտությունը չեն ապացուցում:

ՖՐԻԴՐԻԽ ՆԻՑՇԵ
(1844-1900)
Գերմանացի փիլիսոփա

Մանգաղի համար... ծաղիկն էլ խոտ է:

ՌԱՖԱՅԵԼ ՍԱՐՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ - Ինչո՞ւ են կանայք ավելի շատ ապրում, քան տղամարդիկ:

- Որովհետեւ նրանք երբեք զոքանչ չեն ունենում:

☺ Հանդիպում են 2 ծրագրավորող.

- Լսել եմ՝ ամուսնացե՞լ ես:

- Դա:

- Բա կնոջդ անունը ի՞նչ է:

- Կարի.... չէ Անահ... մի խոսքով՝ ICQ#9876543210!:

☺ - Ինչո՞վ է պատժվում երկկնությունը:

- Երկզոքանչությամբ:

☺ Զոքանչին դատում են:

- Դատավորը հարցնում է, թե ի՞նչ է գողացել խանութից:

- Զոքանչը ասում է.

- Մի բանկա ծիրանի կոմպոտ, մեջը՝ 6 հատիկ ծիրան:

- Դատավորն ասում է.

- Ուրեմն 6 օր կնստես:

- Փեսան դահլիճից ասում է:

- Սուտ է ասում, մի բանկա էլ գարոխ է գողացել:

☺ Ծրագրավորողը փողոցում տեսնում է մի աղջկա.

- Բարեւ Ձեզ, Դուք e-mail ունե՞ք:

- Ո՛չ, ինչո՞ւ:

- Ափսո՜ս, կարող էինք ծանոթանալ:

☺ - Ի՞նչ է կրկեսը:

- Դա մի տեղ է, որտեղ կապիկներն իրենց պահում են մարդկանց նման, իսկ մարդիկ՝ կապիկների:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ. ԸՆԴԳԾՎԵԾ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՈՒ ԽՈՐԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով, 2016թ. դեկտեմբերի 21-ին, բարձրաստիճան պատվիրակության ուղեկցությամբ, պաշտոնական այցով Հայաստան այցելեց Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Հասան Ռոհանին: Իրանի նախագահ Հասան Ռոհանին, այցի շրջանակներում, հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի, վարչապետ Կարեն Կարապետյանի հետ:

Ջերմ մթնոլորտում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում, երկու երկրների նախագահները մտքեր փոխանակեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող քաղաքական, տնտեսական, մշակութային, տարածաշրջանային եւ միջազգային ոլորտներին վերաբերող հարցերի շուրջ: Կողմերը Իրանի նախագահի Հայաստան կատարած այցը գնահատեցին որպես երկու երկրների հարաբերությունների ընդլայնմանն ուղղված կարեւոր քայլ:

Սերժ Սարգսյանը եւ Հասան Ռոհանին կարեւորեցին Հայաստանի եւ Իրանի միջեւ տրանսպորտային կարողությունների ընդլայնումն ու զարգացումը: Այդ համատեքստում նախագահներն ընդգծեցին Հյուսիս-Հարավ միջազգային միջանցքի շրջանակներում, Հայաստանի եւ Իրանի տարածքներով, Պարսից ծոցը Սեւ ծովի հետ կապող միջազգային տրանսպորտային եւ տարանցիկ ուղիների օգտագործման անհրաժեշտությունը: Նախագահները կարեւորեցին գազի եւ էլեկտրաէներգետիկայի բնագավառում երկկողմ եւ բազմակողմ համագործակցության ընդլայնումը, ինչպես նաեւ էլեկտրահաղորդման 3-րդ գծի շահագործումն ու Իրանից Հայաստան մատակարարվող գազի ծավալների ավելացումը:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին՝ երկու պետությունների նախագահներն ընդգծեցին, որ այն պետք է կարգավորվի խաղաղ ճանապարհով՝ հիմնված ՄԱԿ-ի կանոնադրության, միջազգային իրավունքի հիմնարար նորմերի եւ սկզբունքների վրա:

Իրանի նախագահ Հասան Ռոհանին հրավիրեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին՝ պաշտոնական այց կատարել Իրան: Հրավերն ընդունվեց շնորհակալությամբ: Այցի ժամկետները կհամաձայնեցվեն դիվանագիտական խողովակներով:

Հայ-իրանական բարձր մակարդակի բանակցությունների ավարտին ստորագրվել են Հայաստանի եւ Իրանի միջեւ մի շարք ոլորտներում երկկողմ համագործակցության խորացմանն ուղղված փաստաթղթեր:

Հայաստանի եւ Իրանի նախագահները հանդիպման արդյունքներն ամփոփել են զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների առջեւ հայտարարություններով:

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՄԵՆԱԱԶԱՏԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՑ է»

Հայաստանի համար խիստ կարեւոր են օտարերկրյա ուղղակի ներդրումները:

Կառավարության ղեկավարի խոսքով, այդ ներդրումները կարեւոր են ոչ միայն տնտեսական աճի համատեքստում, այլեւ նոր մենեջմենթի մշակույթ ներդնելու ու երկրի բաց լինելու հանգամանքը ի ցույց դնելու, որը կարող է նպաստել նաեւ զբոսաշրջության զարգացմանը:

- Ինչ վերաբերում է սեփականաշնորհմանը, ապա ես կարծում եմ, որ Հայաստանը հետխորհրդային տարածքի ամենաազատական երկրներից մեկն է: Իրականում շատ քիչ պետական սեփականություն կա: Այնուամենայնիվ, համոզված եմ, որ մասնավոր մենեջմենթը մշտապես ավելի լավ է, քան պետականը: Այն նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը, բարձրացնում արդյունավետությունը եւ այլն: Հենց այդ պատճառով էլ մեր նպատակն է սեփականաշնորհել այն ամենը, ինչն ունի բիզնես տրամաբանություն, բացի շատ բացառիկ ոլորտներից, ինչպես օրինակ անվտանգությունը եւ պաշտպանությունը,- շեշտել է ՀՀ կառավարության ղեկավարը:

Կարեն Կարապետյանը նաեւ շեշտում է, որ ՏՏ ոլորտը շատ հետաքրքիր է եւ գրավիչ. այն ունի հսկայական ներուժ եւ հնարավորություններ: Ըստ գործադիր ղեկավարի, օտարերկրյա ներդրումների համար հետաքրքրություն ներկայացնող ոլորտներ են նաեւ գյուղատնտեսությունը, հանքարդյունաբերությունը, թեթեւ արդյունաբերությունը, էներգետիկան, զբոսաշրջությունը եւ այլն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԵԼ է 0,6 ՏՈԿՈՍՈՎ

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը, 2016 թվականի հունվար-նոյեմբերին, 0,6 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Այս տարվա նոյեմբերին, հոկտեմբերի համեմատությամբ, ցուցանիշը նվազել է 5 տոկոսով:

Ինչպես տեղեկացրել է Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը, անկում է գրանցվել շինարարության եւ էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտներում:

Առեւտրի շրջանառությունը 2016-ի հունվար-նոյեմբերին աճել է 0,3 տոկոսով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 6,8 տոկոսով:

Միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 2 տոկոսով, ընդ որում՝ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձը նվազել՝ 1,2, ոչ պետական հատվածում աշխատավարձն աճել է 4,4 տոկոսով: Արտաքին առեւտրաշրջանառության ծավալները, 2015թ. հունվար-նոյեմբերի համեմատությամբ, աճել են 8 տոկոսով, ընդ որում՝ արտահանումն ավելացել է 21,2, իսկ ներմուծումը աճել՝ 2 տոկոսով:

ՆՎԱԶՈՒՄ ԵՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԵՎ ԲԵՆԶԻՆԻ ԳՆԵՐԸ

Հայաստանում վերանայվեցին էլեկտրաէներգիայի սակագները: Սպառողների համար էլեկտրաէներգիայի սակագինը նվազեց 1,22 դրամով:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նիստում սահմանվեցին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող էլեկտրաէներգիայի հետեւյալ սակագները: 110 կվտ լարմամբ սնվող սպառողների համար 1 կվտժ-ի համար ցերեկային սակագինը կլինի 33,48 դրամ, գիշերային սակագինը՝ 29,48 դրամ: 35 կվ լարմամբ սնվող սպառողների համար 1 կվտժ-ի համար սահմանվեց ցերեկային սակագին՝ 35,98 դրամ, գիշերային սակագին՝ 31,98 դրամ: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 6 (10) կվ լարմամբ սնվող սպառողների համար ցերեկային սակագինը կսահմանվի 41,98 դրամ, գիշերային սակագինը՝ 31,98 դրամ: Ինչ վերաբերում է 0,38 կվտ եւ ցածր լարմամբ սնվող սպառողներին (բնակչության զգալի հատվածը), ապա ցերեկային սակագին սահմանվեց 44,98 դրամ՝ նախկին 46,2-ի դիմաց, գիշերային սակագին՝ 34,98 դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի որոշման համաձայն, սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողների համար էլ էլեկտրաէներգիայի ցերեկային սակագինը կլինի 40 դրամ, գիշերային սակագինը՝ 30 դրամ:

Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի փետրվարի 1-ից:

Հայաստանի Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից իրականացված դիտանցումների արդյունքներով արձանագրվել է, որ բենզինի մանրածախ վաճառքի գները 2016 թվականի դեկտեմբերից շարունակաբար նվազում են: Վերջին գնային փոփոխությունը արձանագրվել է դեկտեմբերի կեսերին, երբ բենզինի մանրածախ գները նվազել են եւս 20 դրամով:

-Եթե 2016 թվականի սեպտեմբերին բենզինի մանրածախ գինը կազմում էր 380 դրամ, ապա ներկայումս այն կազմում է 330 դրամ:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Հայաստանի նախագահ, ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը դեկտեմբերի 20-ին հրավիրեց Ազգային անվտանգության խորհրդի նիստ: Օրակարգի շրջանակներում, զեկույցումներով ելույթ ունեցան Հայաստանի էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարար Աշոտ Մանուկյանը, արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

ԼՂՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ ԸՆԴՈՒՆԵԾ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ԼՂՀ Ազգային ժողովը դեկտեմբերի 22-ին գումարել է հերթական լիագումար նիստը: Պատգամավորները յեռնամուխ եղան Հանրապետության գլխավոր ֆինանսական փաստաթղթի, դրան ուղեկցող օրինագծերի եւ օրենքների մյուս նախագծերի քննարկմանը: 27 կողմ, 3 դեմ յայներով, խորհրդարանը ընդունեց «ԼՂՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը:

Պատգամավորները քննարկել եւ ընդունել են նաեւ «Պետական կենսաթոշակների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» եւ «Պետական պաշտոնների զբաղեցրած անչանց սոցիալական երաշխիքների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը, որի համաչայն առաջարկվում է, նշված օրենքներով սահմանված կենսաթոշակների չափերը հաշվարկելիս, աշխատանքային եւ մասնագիտական ստաժում ներառվող ժամանակահատվածները հաշվառել մինչեւ 2018թ.-ի հունվարի 1-ը:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆ ԱՎԵԼԱՑԵԼ է 10,6 ՏՈԿՈՍՈՎ

2016թ. հունվար-հոկտեմբերին մարդասիրական օգնության կարգով Հայաստան է ներմուծվել 7 հազար 39.8 տոննա ապրանք, որի արժեքը կազմել է 20 մլրդ 136.2 մլն դրամ կամ 42 մլն 40.9 հազ. ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, այն ավելացել է 10,6 տոկոսով: Ստացված օգնության 52,6%-ը կազմել են քիմիայի եւ դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը, 14,7%-ը՝ մանածագործական իրերը, 7,5%-ը՝ տարբեր արդյունաբերական ապրանքները, 6,8%-ը՝ մեքենաները, սարքավորումներն ու մեխանիզմները, 4,9%-ը՝ սարքերը եւ ապարատները, իսկ 13,5%-ը՝ մնացած ապրանքները:

ԵՐԿՈՒ ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լիբանանում, երկար բանակցություններից հետո, վերջապես կազմվել է նոր կառավարություն: Նոր կառավարության կազմում ընդգրկվել է երկու հայ նախարար՝ Ժան Օղասափյանը (կանանց հարցերի պետական նախարար) եւ Ավետիս Կիտանյանը (զբոսաշրջության նախարար):

Լիբանանի վարչապետ Սաադ Հարիրին եւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրին երկրի նախագահ Միշել Աունին հանչնել են երեսուն անդամներից բաղկացած կառավարության անվանացանկը:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(24 դեկտեմբերի)

Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը:

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	480,50	484
ԵՎՐՈ	498	506
ՌՈՒԲԼԻ	7,80	7,97

Դեկտեմբերի 16-ի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը մնացել է անփոփոխ:

CyanMagentaYellowBlack

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

26.12.2016. Սուրբ Ստեփանոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի հիշատակության օր

27.12.2016. Սուրբ Պետրոս եւ Պողոս առաքյալների հիշատակության օր

Սուրբ Պետրոսը Տիրոջ 12 առաքյալներից էր, Անդրեաս առաքյալի եղբայրը: Նա Հիսուսի ամենասիրված առաքյալներից էր, ականատեսը՝ Տիրոջ Պայծառակերպության եւ Հիսուսի հետ կապված կարեւոր մյուս դեպքերի:

Ըստ ավանդության, նահատակվել է Հռոմում՝ գլխիվայր խաչվելով: Մեզ են հասել նրա երկու ընդհանրական նամակները:

Սուրբ Պողոսը Տիրոջ 13-րդ առաքյալն է: Ծնվել է Կիլիկիայի Տարսոն քաղաքում, առաջին դարի սկզբներին: Մեզ են հասել նրա 14 թուղթը: Ըստ ավանդության, նահատակվել է Հռոմում, 67 թվականին, Ներոնի հալածանքների ժամանակ ու գլխատվել: Հայ Առաքելական եկեղեցին Սուրբ Պետրոս եւ Պողոս առաքյալների հիշատակի օրը տոնում է Սուրբ Ծննդին նախորդող Ավագ տոների ժամանակ:

29.12.2016. Բարեկենդան Սուրբ Ծննդեան պահոց

Սուրբ Ծննդյան պահքի Բարեկենդանն անփոփոխ նշվում է դեկտեմբերի 29-ին, այսինքն՝ Սուրբ Ծննդից 7 օր առաջ: Սուրբ Ծննդյան պահքն իր մեջ ընդգրկում է նաեւ Նոր տարվա տոները մինչեւ հունվարի 5ը՝ Սուրբ Ծննդյան ճրագալույցը:

29.12.2016. Սուրբ Որոտման որդիների՝ Հակոբոս առաքյալի եւ Հովհաննես ավետարանչի հիշատակության օր:

ՆՈՐ ԱՌԱՋՆԱԽԱՂ

ՍԻՐՈՂԱԿԱՆ ԽՄԲԻ ՆՈՐ ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերջերս, Թբիլիսիի Գիորգի Լեոնիձեի անվան գրականության թանգարանի դահլիճում, տեղի ունեցավ կատակերգական «Ամեն ինչ սկսվեց խաչբառից» պիեսի առաջնախաղը: Այն հեղինակի՝ սիրողական խմբի կազմակերպիչ Արտեմ Կիրակոզովի երկրորդ բեմադրությունն էր: Ներկայացմանը նա մասնակցում էր ե՛ւ որպես ռեժիսոր, ե՛ւ որպես գլխավոր դերակատար:

Կատակերգությունը հագեցված էր երաժշտական եւ պարային «դադարներով» եւ հեղինակի նախկին՝ «Անտրիպրիզ՝ կցորդի համար» ներկայացման յուրովի շարունակությունն էր, որը հանդիսատեսին ներկայացվել էր անցյալ տարի: Այդ ներկայացման մեջ դերերից մեկը կատարում էր ներկայումս երջանկահիշատակ, թբիլիսցի ճանաչված նկարիչ ու թարգմանիչ Ջովաննի Վեփխվածեն: Ներկայիս առաջնախաղը նվիրված էր նրա հիշատակին:

Ինչպես նախորդ ներկայացման մեջ, այս անգամ եւս, անդադար Չալիչաեւը (դերակատար՝ Ա.Կիրակոզով), խաչբառից սովորելով բանկային արտահայտություններից մեկը, երկար չմտածելով, անմիջապես ձեռնամուխ եղավ ֆինանսական բիզնեսին՝ ընկնելով մոտիկների ազդեցության տակ (դերակատարներ՝ Վախթանգ Արոշիձե, ճանաչված երգահան-կատարող, ինժեներ-երկրաբան, Գարրի Ղալամքարով՝ կենսաբանության ուսուցիչ, ժողովրդական թատրոնի նախկին դերասան): Այս անգամ էլ ներկայացումը զերծ չէր խաբեբաներից ու նրանց զոհերից: Նախկին դերերին ավելացան եւս երկու նոր դերակատար. «պայծառատեսներ»՝ բանասեր Ժաննա Խաչատրյանը եւ նախկինում ԽՍՀՄ բասկետբոլի երիտասարդական հավաքականի անդամ, ժամանակին կինոֆիլմերում նկարահանված Ինեսսա Մոնեսը:

Կատակերգությունը կառուցված էր արդի քննադատական ռեալիզմի ոգով, բացահայտում էր թուլակամ մարդկանց թերացումները: Եվ նորից ուրախ ու զվարճալի եզրափակումը հույս են ներշնչում, որ, չնայած արդի կյանքի անհեթեթ հանգամանքներին, թունելի վերջում լույս է երեւում, եւ կյանքը հիանալի է իր անսպասելի ու հաճելի անակնկալներով: Գլխավորը, ինչպես ասում է Ադամ Չալիչաեւը. «Պետք չէ մի տեղում դոփել, այլ ձգտել միշտ առաջ»:

Ներկայացմանը մասնակցեցին նաեւ ռոք երաժիշտ Ռեւազ Դեկանոզաշվիլին, տնտեսագետ Իլիա Մաղրաձեն, «Ինտելեկտ» դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Վլադիսլավ Պուգաչը:

Դահլիճը ջերմորեն ընդունեց ներկայացումը եւ բուռն ծափահարություններով վարձատրեց դերասաններին:

ԱՐՍԵՆ ԲԱՐԱԿԱՋՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ՝ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան հրապարակել է ազգային հավաքականների հերթական վարկանիշային աղյուսակը: Նախորդի համեմատությամբ, թե՛ Վրաստանի եւ թե՛ Հայաստանի հավաքականները առաջադիմել են մեկ հորիզոնականով: Վրաստանի թիմը ներկայումս հանգրվանել է 118-րդ հորիզոնականում, իսկ Հայաստանի հավաքականը 86-րդն է:

Մրցաշարային աղյուսակի առաջատարը Արգենտինայի հավաքականն է: Լավագույն տասնյակում են նաեւ Բրազիլիան, Գերմանիան, Չիլին, Բելգիան, Կոլումբիան, Ֆրանսիան, Պորտուգալիան, Ուրուգվայը եւ Իսպանիան:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՍՏԵՓԱՆԾՄԻՆԴԱ-ԼԱՐՍ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԸ ԲԱՑ Է

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ենթակառուցվածքների եւ տարածքային զարգացման նախարարության ճանապարհային դեպարտամենտը, Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է բոլոր տրանսպորտային միջոցների համար:

Վարորդներին հորդորում են երթեւեկել բացառապես ձմեռային անվադողերով ու անվաշղթաներով:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ «ՀԱՅԱՐՏՈՒՆ» ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

ԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱԳԻՐ «ԱՍՏՎԱՆԾԱՇՆՉԻ» 350-ԱՄՅԱԿԻՆ

Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում ոգեկոչվեց հայերեն տպագիր «Աստվածաշնչի» 350-ամյակը:

Միջոցառումն սկսվեց Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու երգչախմբի կատարմամբ «Տերունական աղոթքով, ապա՝ «Հրաշափառ›››-ի հնչյունների ներքո հանդիսավորությամբ դահլիճ բերվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի Սրբատառ Կոնդակը՝ «Աստվածաշնչի» հայերեն տպագրության 350-ամյակի առիթով: Կոնդակն ընթերցեց Վիրահայոց թեմի առաջնորդի օգնական հոգեշնորհ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանը:

Ցուցադրվեց տեսաֆիլմ՝ նվիրված Ամստերդամում Ոսկան Երեւանցու ազգանվեր գործունեությանը, որի արդյունքում 1666 թվականին 5 հազար օրինակ տպաքանակով առաջին անգամ հայերեն «Աստվածաշունչ» տպագրվեց:

Միջոցառումն ամփոփեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Իր օրհնությունը հղելով ներկաներին՝ Թեմական առաջնորդը արժեւորեց հայերեն «Աստվածաշնչի» տպագրության դերն ու նշանակությունը՝ գնահատելով այն որպես ազգային պահպանության, գրի ու մշակույթի զարգացման եւ քրիստոնեական հավատքի ամրապնդման եզակի միջոց:

Վիրահայոց թեմի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու Մակար Եկմալյան (խմբավար՝ Սվետլանա Տատոեւա) երգչախմբի կատարմամբ հնչեցին «Հայր մերը», «Հրաշափառ» «Վարանիմք», «Ով զարմանալի» եւ «Հրաշացան» շարականները, իսկ «Հայարտուն» կենտրոնի «Ներսես Շնորհալի» երգչախումբը (խմբավար՝ Մարի Աբուլյան, դաշնակահար՝ Կարեն Միրզոյան) կատարեց Ներսես Շնորհալու «Նոր ծաղիկ», Մեսրոպ Մաշտոցի «Հայոց գրեր» եւ Ռաֆայել Պատկանյանի «Օրորոցային» երգերը:

Հանդիսության ընթացքում, ցուցադրվեցին 1733 թվականին Վենետիկում Մխիթար Սեբաստացի աբբահոր կողմից հայերեն «Աստվածաշնչի» վերահրատարակության, 1786 եւ 1842 թթ. Տփխիսի, 1857 եւ 1895 թթ. Կոստանդնուպոլսի եւ այլ տարիներին հրատարակված տպագիր օրինակները:

ՇԱԳՈՒՄՈՎ ՀԵՇՏԻԱԾԻ, ՄՅՈՒՆԽԵՆՈՒՄ ԱՊՐՈՂ, ՀԱՅՏՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում հյուրընկալվեց Գերմանիայի Մյունխեն քաղաքի Հելմոնց կենտրոնի եւ տեղի տեխնիկական համալսարանի պատկերման ամբիոնի դոկտոր, պրոֆեսոր Սահակ Հովսեփյանը:

44-ամյա պրոֆեսոր Հովսեփյանը, Թբիլիսիի պետական բժշկական համալսարանի հրավերով, «Ուղեղի օպտիկական եւ օպտիկա-ակուստիկ պատկերումը» թեմայով դասախոսություններ կարդաց ուսանողների եւ դասախոսների համար: Համանման դասախոսությամբ նա նորերս հանդես էր եկել նաեւ Երեւանում, տեղի պետական բժշկական համալսարանի հրավերով:

Ուրախությամբ նշենք, որ Սահակը ծնվել ու մեծացել է Նինոծմինդայի շրջանի Հեշտիա գյուղում, հայտնի բանաստեղծ, երջանկահիշատակ Վիկտոր Հովսեփյանի եւ այսօր մունիցիպալիտետում հայտնի բժշկուհի Թերեզա Հովսեփյանի ընտանիքում:

Սահակ Հովսեփյանը Թբիլիսիում գտնվելու առիթը օգտագործեց նաեւ բժշկության բնագավառն ընտրած վիրահայ երիտասարդներին եւ հասարակության ներկայացուցիչներին հանդիպելու ու իրազեկելու բժշկության այդ բնագավառում գիտության վերջին նվաճումների մասին:

Ճանաչված գիտնականը հավաքվածներին պատմեց իր անցած ուղու մասին, հորդորեց երիտասարդներին չվախենալ դժվարություններից եւ աշխատասիրությամբ, գործին նվիրվածությամբ անպայման հասնել նպատակին:

Հանդիպումն ամփոփեց Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգեւոր հովիվ, արժանապատիվ Տեր Վիրապ քահանա Ղազարյանը:

ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445